ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/08

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

Բողոքաբեր՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Պետրոսյանի, ներկայացուցիչներ՝ Հ. Ղազարյանի, Հ. Քոյլոյանի

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մարտիրոսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնանշման հարցում, անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)

կողմից 01.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ վերացնել «ԲԵՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի 25.11.2019 թվականի թիվ 3 և 15.01.2020 թվականի թիվ 4 արձանագրությունները, իսկ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությանը պարտավորեցնել ընդունելու «ԲԵՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 01.02.2020թ.-ին:

01.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և նույն օրը հայտարարությունը հրապարակվել www.gnumner.am կայքում:

06.02.2020թ.-ին և 17.02.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 17.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.02.2020թ.-ին:

2. <u>«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) 14.11.2019 թվականին հայտարարել է «ԲԵՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև Ընթացակարգ), իր կարիքների համար՝ անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով: Հիմք՝ Պատվիրատուի 14.11.2019 թվականի հայտարարությունը:

1.2.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշում է կայացրել իրականացնել բանակացություններ, մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկների արդյունքում Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով հաղթող է ճանաչվել «ՏՐԱՆՍ ՍՖԵՐ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից): Հիմք՝ Հանձնաժողովի 25.11.2019 թվականի թիվ 3 արձանագրությունը:

1.3.Հանձնաժողովի կողմից իրականացված բանակցությունների արդյունքում «Պահապան1» ՍՊ ընկերության կողմից ներկայացված նոր գնային առաջարկը եղել 2-րդ չափաբաժնի մասով եղել է ինքնարժեքից ցածր: Հիմք՝ «Պահապան1» ՍՊ ընկերության կողմից 20.11.2019 թվականի գնային առաջարկը:

1.4.Մասնակցի հետ պայմանագիր չկնքելու արդյունքում Պատվիրատուն որոշել է Մասնակցին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից և 1-ին չափաբաժնի մասով Ընթացակարգը համարել ոչկայացած, իսկ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Պահապան1» ՍՊ ընկերությանը: Հիմք՝ Հանձնաժողովի 15.01.2020 թվականի թիվ 4 արձանագրությունը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) (…):

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: (…):

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-ի ա ենթակետի համաձայն՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները): Նույն կետի 5-ի զ ենթակետի համաձայն՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ՝

- միևնույն գնման առարկայի բնութագրերով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել է առնվազն մեկ գնման մրցակցային ընթացակարգ, որը չկայացած է

հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված.

- ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ Օրենսդիրը սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայման, այն մասով որ այն պետք է ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ նշում պետք է առկա լինի նաև հրավերում: Իսկ գնումների ընթացակարգերի հանձնաժողովները գների նվազեցման նպատակով կարող են վարել բանակացություններ, որտեղ հաղթող կարող է ճանաչվել բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը, սակայն ընդհանուր կանոնի համաձայն ոչ պակաս քան ինքնարժեքը: Իսկ եթե ինքնարժեքից պակաս գնային առաջարկի հիման վրա կնքվի համապատասխան պայմանագիր, ապա այն կառաջացնի անվավերության հիմքեր: Միփնույն ժամանակ Ընթացակարգի շրջանակում պետք է պահպանվեն մրցակցության սկզբունքները և չթույլատրվեն անբարեխիղճ մրցակցային գործողություններ:

Նշվածը իր հերթին համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել, որ Պատվիրատուն իրականացրել է բանակցություններ, որի արդյունքում մասնակիցները

ներկայացրել են նոր գնային առաջարկներ, «Պահապան1» ՍՊ ընկերության գնային առաջարկը 2-րդ չափաբաժնի մասով ինքնարժեքից ցածր և ըստ էության Հանձնաժողովի կողմից ոչ բարեխիղճ մրցակցության արդյունքում դրդել են մեզ առավել նվազ գին առաջարկելուն, իսկ արդեն 15.01.2020 թվականի թիվ 4 արձանագրությամբ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Պահապան1» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու որոշում են կայացրել, որը ոչ իրավաչափ են և ենթակա վերացման, քանզի բանակցությունների արդյունքում «Պահապան1» ՍՊ ընկերության գնային առաջարկը ցածր է եղել ինքնարժեքից, որի մասին տեղեկությունները առկա են նույն ընկերության կողմից 20.11.2019 թվականին ներկայացված գնային առաջարկում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկու չափաբաժիններով «ՏՐԱՆՍ ՍՖԵՐ» ՍՊ ընկերության առաջարկվել է կնքել մեկ պայմանագիր, որտեղ նվազեցված գնային առաջարկը եղել է Հանձնաժողովի հակաօրինական գործողությունների և անբարեխիղճ մրցակցության արդյունք, ուստի օրենքի խախտմամբ կնքվելիք պայմանագրից զերծ մնալը Մասնակցին տրված իրավունքն է: Իսկ «Պահապան1» ՍՊ ընկերության մասով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի վերաբերյալ կնքվելիք պայմանագիրը նույնպես ենթակա կլինի անվավեր ճանաչման օրենքի խախտմամբ կնքված լինելու հիմքով:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ վերացնել «ԲԵՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի 25.11.2019 թվականի թիվ 3 և 15.01.2020 թվականի թիվ 4 արձանագրությունները, իսկ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությանը պարտավորեցնել ընդունելու «ԲԵՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշում:

Ներկայացված բողոքի լրացմամբ, Ընկերությունը հայտնել է նաև հետևյալը.

««Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից սույն բողոքի քննության ընթացքում ներկայացվել է «ԲԵՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև Ընթացակարգ) վերաբերյալ փաստաթղթերը, որոնց ցանկից ակնհայտ է Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունները, մասնավորապես «Պահապան1» ՍՊ ընկերության կողմից բանակցությունների արդյունքում ներկայացված նոր գնային առաջարկը փոփոխվել է, որը արգելվում է գործող օրենսդրությամբ ավելին իր մեջ պարունակում է որոշակի ոչ իրավաչափ վարքագիծ:

Նշեմ նաև, որ բանակցությունների արդյունքում ներկայացված նոր գնային առաջարկի նվազեցումը չի կարող կատարվել ինքնարժեքի հաշվին, որի վերաբերյալ իրավական հիմնավորումները ներկայացվել է բողոքում, իսկ սույն դեպքում «Պահապան1» ՍՊ ընկերության կողմից բանակցությունների արդյունքում ներկայացված նոր գնային առաջարկի կրկնակի փոփոխված տարբերակում նվազեցումը կատարվել է ինքնարժեքի հաշվին:

Բացի նշվածից սույն բողոքի ընացակարգի շրջանակում Պատվիրատուի ներկայացուցիչը բանավոր կերպով հայտնեց, որ բանակցությունների արդյունքում «Պահապան1» ՍՊ ընկերության կողմից ներկայացված նոր գնային առաջարկը իր մեջ չէր պարունակում տեղեկատվություն ինքնարժեքի մասին և իրենց պահանջով հետագայում ներկայացվել է նոր գնային առաջարկի ուղղված տարբերակը, որը նույնպես խոսում է Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունների մասին, քանզի նոր գնային առաջարկները մասնակիցների կողմից ներկայացվում են բանակցությունների ընթացքում, այլ ոչ թե դրա ավարտից հետո, իսկ ներկայացված նոր գնային առաջարկի ուղղում Օրենսդիրը Պատվիրատուի համար չի նախատեսել, բացի այդ եթե «Պահապան1» ՍՊ ընկերության կողմից ներկայացված նոր գնային առաջարկը չէր պարունակում տեղեկատվություն ինքնարժեքի մասին, ապա «Պահապան1» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը ենթակա էր մերժման:

Ուստի Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը առավել քան հիմնավորում են Պատվիրատուի ոչ բարեխիղճ գործողությունները որոնք հանգեցրել են ոչ բարեխիղճ մրցակցության:

«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից սույն բողոքի քննության շրջանակում 18.02.2020 թվականին ներկայացրել է դիրքորոշում այն մասին, որ «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից սույն Ընթացակարգի շրջանակում բողոքը ներկայացվել է պայմանագրի կնքումից՝ 30.01.2020 թվականից հետո 01.02.2020 թվականին:

Հայտնեմ, որ Պատվիրատուի կողմից ենթադրյալ 30.01.2020 թվականին կնքված պայմանագիրը տեղեկագրում հրապարակվել է 06.02.2020 թվականին ժամը 18:21:47: Նույն օրը ավելի վաղ ժամը 14:30-ին սույն Ընթացակակարգի քննության շրջանակում հրավիրված է եղել նիստ, որտեղ Պատվիրատուն փորձել է տարբեր հիմնավորումներով հերքել փաստացի կատարված գործողությունները, արդյունքում հայտնվելով իր իսկ

պնդումների թակարդում, նիստից հետո փորձել է իր գործողությունները համապատասխանեցնել իր խոսքին, մասնավորապես նիստի ավարտից հետո ժամեր անց տեղեկագրում հրապարակել է թիվ «ԲԵՑ-ԳՀԾՁԲ-19/56» գնման ընթացակարգի շրջանակում Պայմանագիր կնքելու մասին տեղեկատվություն և հաջորդ նիստից հանդես եկել նոր պնդմամբ թե իբր բողոքը ներկայացվել է Պայմանագիրը կնքելուց հետո: Նման ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում կասկածի տակ է դրվում կնքված պայմանագրի ժամկետները: Իդեպ նշեմ նաև, որ կնքված պայմանագրի գինն էլ իր հերթին չի համապատասխանում Ընթացակարգի շրջանակում իրականացված բանակցությունների ժամանակ «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկին:

Պատվիրատուն յուրաքանչյուր լրացուցիչ փաստաթուղթ և լրացուցիչ դիրքորոշում հայտնելուց էլ ավելի է խճճում իրավիճակը ստեղծելով վիճարկման նոր հիմքեր, ևս մեկ անգամ ապացուցել, Պատվիարտուի կողմից թույլ տրված ընթացկարգային խախտումներն ու ոչ բարեխիղճ վերաբերմունքը:

Ամփոփելով նշվածը գտնում եմ, որ Պատվիրատուի ոչ իրավաչափ վարքագիծը՝ դիրքորոշման հիմքում դրված փաստերը, այդ թվում Պայմանագիր կնքելու մասին տեղեկատվության հրապարակումը սահմանված ժամկետների խախտմամբ ուղղված է միայն իր անհիմն պնդումները ինչ որ կերպ հիմնավորելու փորձ կատարելուն և Պայմանագիր կնքելու տեղեկատվությունը տեղեկագրում հրապարակվել է սույն բողոքը իրավաչափորեն վարույթ ընդունելուց հետո, այն էլ բողքի քննության շրջանակում հրավիրված առաջին նիստից հետո, ուստի Պատվիրատուի դիրքորոշումները անհիմն են և ուղղորդված հենց իր ոչ իրավաչափ վարքագծով:»:

3. <u>«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 01.02.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/1242-2020 գրությամբ դիմել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 01.02.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 05.02.2020թ.-ի թիվ Մ-3935-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2020թ. փետրվարի 1-ի N /ԲՔԱ-ԼՕ/2/1242-2020 գրության՝ հայտնում եմ, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար 2019թ. նոյեմբերի 14-ին հայտարարվել է «ԲԷՅ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ)՝ երկու չափաբաժիններով, որին հայտ են ներկայացրել չորս ընկերություններ: Հաշվի առնելով, որ Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա (առանց ֆինանսական միջոցների առկայության)՝ ուստի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտ ներկայացրած բոլոր մասնակիցները հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Նախորդ տարվա ընթացքում Ընկերությունը ունեցել է նմանատիպ ծառայության ձեռքբերում, որի ընթացքում կնքված պայմանագրի գինը սույն Ընթացակարգի համար սահմանվել է որպես նախահաշվային գին: Բանակցությունների արդյունքում իրենց կողմից ներկայացված գները 1-ին չափաբաժնի մասով որևէ մասնակից չի նվազեցրել, իսկ որպես նախահաշվային գին սահմանված է եղել 18 492 000 ՀՀ դրամը (ներառյալ՝ ԱԱՀ-ն): Սկզբնական գնային առաջարկով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ն ներկայացրել է 15 540 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն՝ 31 800 000 ՀՀ դրամ՝ (ներառյալ՝ ԱԱՀ-ն), արդյունքում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ն: 2-րդ չափաբաժնի համար որպես նախահաշվային գին սահմանված է եղել 32 206 920 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ն): Բանակցությունների արդյունքում «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ն իր կողմից առաջարկված 27 720 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) գինը նվազեցրել է մինչև 26 450 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ՍԱՀ-ն), իսկ «Պահապան1» ՍՊԸ-ն իր կողմից առաջարկված 38 400 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) գինը նվազեցրել է մինչև 31 800 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն), արդյունքում 2-րդ չափաբաժնի մասով նույնպես ընտրված մասնակից է ճանաչվել «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ն:

Անգործության ժամկետի ավարտից հետ Ընթացակարգի երկու չափաբաժինների մասով «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ին առաջարկվել է կնքել համապատասխան պայմանագիր, իսկ այնուհետև համաձայնագիր՝ պայմանագրի կատարման համար ֆինանսական

միջոցներ հատկացնելու վերաբերյալ: Սակայն «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում (15 աշխատանքային օրվա ընթացքում) չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը, համաձայնագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները (վերջիններս ըստ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N-526-Ն որոշմամաբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ պետք է ներկայացներ բանկային երաշխիքի տեսքով) ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:»:

Պատվիրատուի ներկայացուցիչը ներկայացրած լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար 2019թ. նոյեմբերի 14-ին հայտարարվել է «ԲԷՏ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ)՝ երկու չափաբաժիններով, որին հայտ են ներկայացրել չորս ընկերություն: Հաշվի առնելով, որ Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա (առանց ֆինանսական միջոցների առկայության)՝ ուստի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտ ներկայացրած բոլոր մասնակիցները 2019թ. նոյեմբերի 25-ին հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Բանակցությունների ավարտին երկու չաբաբաժինների մասով էլ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչվել է «ՏԸԱՆՍ-ՍՖԵԸ» ՍՊ ընկերությունը, իսկ առաջին չափաբաժնի մասով հաջորդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրել է «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն, իսկ երկրորդ չափաբաժնի մասով «Պահապան1» ՍՊԸ-ն:

2019թ. նոյեմբերի 29-ին հայտարարվել է անգործության ժամկետ, որի ժամկետը սահմանվել է «հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը», որի ավարտից հետո Ընթացակարգի երկու չափաբաժինների մասով «ՏԸԱՆՍ-ՍՖԵԸ» ՍՊԸ-ին առաջարկվել է կնքել համապատասխան պայմանագիր, իսկ այնուհետև համաձայնագիր՝ պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ հատկացնելու վերաբերյալ: Սակայն «ՏԸԱՆՍ-

ՍՖԵԸ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում (15 աշխատանքային օրվա ընթացքում), որը լրացել է 2019թ. հունվարի 14-ին, չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը, համաձայնագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները (վերջիններս ըստ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N-526-Ն որոշմամաբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ պետք է ներկայացներ բանկային երաշխիքի տեսքով) ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի

36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարվել է չկայացած, քանի որ հաջորդ գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում էր տվյալ Ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ծառայության գնման հայտով սահմանված գինը (նախորդ տարվա ընթացքում նմանատիպ գործարքով հաստատված գինը):

Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել հաջորդաբար տեղ զբաղեցրած «Պահապան1 ՍՊԸ-ն, և վերջինիս սահմանված կարգով առաջարկվել է կնքել համապատասխան պայմանագիր, որը և կնքվել է 2020թ. հունվարի 30-ին:

«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ի կողմից բողոքը ներկայացվել է 2020թ. փետրվարի 1-ին, այսինքն այն ժամանակ, երբ Ընկերության կողմից Ընթացակարգն արդեն ամբողջ ծավալով ավարտված է եղել:»

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/08 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն և «Պահապան1» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.11.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, գնային առաջարկի նվազեցման նպատակով, որոշել է գնման ընթացակարգի մասնակիցներին հրավիրել բանակցությունների, 2019 թվականի նոյեմբերի 25-ին ժամը 11:00-ին (20 րոպե տևողությամբ) ք. Երևան Զ. Անդրանիկի փող. 1 հասցեում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ին, որին սահմանված կարգով, անգործության ժամկետի ավարտից հետո, կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր:

Նույն արձանագրության համաձայն՝

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 Անվտանգության և պահնորդային ծառայություններ			
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս			
	Հայտով ներկայացված գնային առաջարկ		Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկ	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	15540000	15540000	15540000	15540000
«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	26500000	31800000	26500000	31800000
«Պահապան1» ՍՊԸ	32000000	38400000	32000000	38400000

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՍԱՐԸ՝ 2 Անվտանգության և պահնորդային ծառայություններ			
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս			
	Հայտով ներկայացված գնային առաջարկ		Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկ	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	27720000	27720000	26450000	26450000
«Պահապան1» ՍՊԸ	32000000	38400000	22083333,3	26500000
«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	32600000	39120000	32600000	39120000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից gnumner.am կայքում 29.11.2019թ.-ին հրապարակվել է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ կարիքների համար անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ 04.12.2019թ.-ը ներառյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով՝ անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի ամբողջությամբ, պայմանագիրն ուժի մեջ մտնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ կնքվելիք լրացուցիչ համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքների տեսքով, ուստի գնահատող որոշել է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով, «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից: «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով

հայտարարվել է չկայացած, քանի որ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է տվյալ ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ծառայության գնման հայտով սահմանված գինը (նախորդ տարվա ընթացքում նմանատիպ գործարքով հաստատված գինը): «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած «Պահապան1» ՍՊԸ-ին, և վերջինիս սահմանված կարգով առաջարկել կնքել համապատասխան պայմանագիր:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 01.02.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը,

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի

նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ

գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման: Հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Բողոքներ քննող անձի քննությանը ենթակա են միայն այն բողոքները, որոնք ներկայացվում են նախքան պայմանագրի կնքումը: Ընդ որում պայմանագիր կնքելու որոշման դեմ բողոք կարող է ներկայացվել անգործության ժամանակահատվածում:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել նաև «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն և «Պահապան1» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, գնային առաջարկի նվազեցման նպատակով, որոշել է գնման ընթացակարգի մասնակիցներին հրավիրել բանակցությունների, 2019 թվականի նոյեմբերի 25-ին ժամը 11:00-ին (20 րոպե տևողությամբ) ք. Երևան Զ. Անդրանիկի փող. 1 հասցեում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ»

ՍՊԸ-ին, որին սահմանված կարգով, անգործության ժամկետի ավարտից հետո, կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր:

Նույն արձանագրության համաձայն՝

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 Անվտանգության և պահնորդային ծառայություններ			
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս			
	Հայտով ներկայացված գնային առաջարկ		Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկ	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	15540000	15540000	15540000	15540000
«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	26500000	31800000	26500000	31800000
«Պահապան1» ՍՊԸ	32000000	38400000	32000000	38400000

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱԱԱՐԸ՝ 2 Անվտանգության և պահնորդային ծառայություններ			
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս			
	Հայտով ներկայացված գնային առաջարկ		Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկ	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ	27720000	27720000	26450000	26450000
«Պահապան1» ՍՊԸ	32000000	38400000	22083333,3	26500000
«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ	32600000	39120000	32600000	39120000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից gnumner.am կայքում 29.11.2019թ.-ին հրապարակվել է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ կարիքների համար

անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ 04.12.2019թ.-ը ներառյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով՝ անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի ամբողջությամբ, պայմանագիրն ուժի մեջ մտնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ կնքվելիք լրացուցիչ համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքների տեսքով, ուստի գնահատող որոշել է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով, «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից: «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած, քանի որ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է տվյալ ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ծառայության գնման հայտով սահմանված գինը (նախորդ տարվա ընթացքում նմանատիպ գործարքով հաստատված գինը): «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած «Պահապան1» ՍՊԸ-ին, և վերջինիս սահմանված կարգով առաջարկել կնքել համապատասխան պայմանագիր:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը Հանձնաժողովի 25.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությունը դադարեցնելու պահանջի մասով ներկայացվել է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով սահմանված ժամկետների խախտմամբ, քանի որ բողոքաբերն իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման համար կարող էր բողոք ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին մինչև Հանձնաժողովի կողմից gnumner.am կայքում 29.11.2019թ.-ին հրապարակվել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կարիքների համար անվտանգության և

պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ 04.12.2019թ.-ը ներառյալ:

Վերոնշյալով պայմանավորված Բողոքներ քննող անձը Հանձնաժողովի 25.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության իրավաչափության հարցին, ինչպես նաև բողոքով բարձրացված՝ մինչև Հանձնաժողովի 15.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությունը կայացնելը Հանձնաժողովի կողմից իրականացված գործողությունների ու վերջինիս կողմից կայացված որոշումների իրավաչափության հարցերին չի անդրադառնում: Որպիսի պայմաններում բողոքի մյուս պահանջները, այն են՝ 15.01.2020թ.-ի թիվ 4 արձանագրությունը և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու մասին ներկայացրած պահանջները դառնում են անհիմն և այս մասով բողոքը ենթակա է մերժման, քանի որ բողոքով ներկայացված հանգամանքները վերաբերում են մինչև 15.01.2020թ.-ի թիվ 4 արձանագրությունը կայացնելը Հանձնաժողովի կողմից իրականացված գործողություններին ու վերջինիս կողմից կայացված որոշումների իրավաչափությանը, որպիսի պարագայում Ընկերությունը բողոք պետք է ներկայացներ մինչև պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ 04.12.2019թ.-ը ներառյալ:

Անդրադառնալով գործում առկա այլ փաստերին, Բողոքներ քննող անձը արձանագրում է հետևյալը.

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու

մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով: Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից չի պահպանվել Օրենքի ու Կարգի վերոնշյալ դրույթները: Հանձնաժողովը 15.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/56» ծածկագրով ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած «Պահապան1» ՍՊԸ-ին, և վերջինիս սահմանված կարգով առաջարկել կնքել համապատասխան պայմանագիր, www.gnumner.am պաշտոնական կայքում չի հրապարակել պայմանագիր կնքելու մասին հայտարարություն՝ չսահմանելով անգործության ժամկետ, որը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է, իսկ մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի արդեն 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն մասով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Վերոնշյալ դրույթների վերլուծությունից պարզ ու հստակ է, որ գնման գործընթացը կասեցվում է օրենքի ուժով, այն է՝ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից և շարունակում է ընթացակարգը կասեցված մնալ մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը: Միևնույն ժամանակ մեջբերված հոդվածի դրույթներից հստակ է, որ գնման գործընթացը կարող է կասեցումից հանվել մի միայն Բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշման հիման վրա՝ պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, ելնելով հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 01.02.2020թ.-ին ներկայացված բողոքը Բողոքներ քննող անձին (Լ. Օհանյանին) է մակագրվել 01.02.2020թ.-ին, նույն օրը բողոքը ընդունվել է վարույթ և www.gnumner.am պաշտոնական կայքում տեղադրվել է բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը, դրանով իսկ, օրենքի ուժով, կասեցնելով գնման գործընթացը:

Նման պայմաններում, հաշվի առնելով, որ բողոքը վարույթ ընդունելու մասին նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից՝ գնման գործընթացը օրենքի ուժով կասեցվել է, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի վերաբերյալ 01.02.2020թ.-ից հետո կատարված բոլոր գործողություններն ոչ իրավաչափ են և հակասում են Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 01.02.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/08 ծածկագրով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ